

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պուշկարիոյ համար	12 փր.
սարեկան	7 "
վեցամսեայ	7 "
Արսասահեակի համար	15 "
սարեկան	8 "
վեցամսեայ	8 "
Ավերիկայի համար	3 փր.
սարեկան	3 փր.
վեցամսեայ	4.50 "

Մանուգլանի տղը աստաղին երեսին համար 40 սանթրիլ իսկ վերջին երեսին համար 20 սանթրիլ է. երկինքն աւելի սեփականորէն համար 20 0/0 զեղը կըլայ:

Վառնայի համար ձեռքի 10 սանթրիլ է

# ՇԱԲԱԹ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ՔՈՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ՎԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻ ՉՈՐԻՔՆԵՐԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

Отговорникъ: СТЕПАНЪ КАНАРЯНЪ

Նամակ եւ դրամ որկեղ խմբագրութեան հասցիին

Редакция на вѣстникъ "Шаржумъ" Варна

Redaction du journal "Charjourn" Varna (Bulgarie)

Պուշկարիոյ համար ձեռքի 15 ՍԱՆԹՐԻՄ Արսասահեակի համար ձեռքի 20 ՍԱՆԹՐԻՄ

Գրութեանք եւ չեմ է ուր

ՇԱԲԱԹԻՄԻ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԳՐՈՒՆԵՐԸ ԳԼՏԻ ԵՒ ԿԱՆԿԻԿ ՎՃԱՐԷ

ԺՕՐԻՍԻ ԽՈՍՏՈՒԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Պուշկին «Ձր. Յայթուել» թերթին կը հազորդեն հետեւեալը.

Ժօրիսի ըրած ընդարձակ խոստովանութիւններէն վերջը ինքնին հարց կը ծագի թէ ինչու ժօրիս եւս ելազգի մահափորձէն վերջը միւս դաւադիրներու հետ չը փախաւ:

Ժօրիս խոստովանած է որ զժօրիսին մեքենան մաս մաս բերուած է գաղտնի կերպով Սինգեր եւ ընկերութեան մասնաձեւըին միջոցով, իսկ տինամիտը փոքրիկ կապոյցներով պուկարական նաւերով Վառնայէն:

Որ. սէլամըներու ատեն զաւազիր ներք զացած են զիտելու թէ քանի բոպէյի մէջ Սուլթանը մզկիթէն կրնայ հասնիլ այն հրապարակը ուր որ տեղի պիտի ունենար մահափորձը. եւ այդ գիտողութիւններու հիման վրայ ժամացոյց մեքենան լարած են երկու բոպէյի համար: Սուլթանը իր ազատուցը կը պարտի Շէյխուլիսա. մին շատ խօսակցութեան բռնութիւն. ժամացոյց մեքենան լարուած է ոչ թէ կառապանի ձեռքով, այլ Ռոզա Կալիկի անունը կը կրողի որուն տակ թագնուած է Ռուսահայուէի յը:

Ժօրիս խոստովանած է նաեւ որ եթէ մահափորձը յաջող ըլլար քաղաքին մէջ ուրիշ տինամիտային փորձեր պիտի ըլլային անկարգութիւններ եւ եւրոպական միջամտութիւն առաջ բերելու համար:

Կսին թէ ժօրիս իր այդ յայտնութիւններուն համար քացի չը պատժուելէ մեծ վարձատրութիւն ստացած է:

ՎԸ ԳՐՈՒՆԵՐԻ ԷՕՐՕՊԻԷՆԸ՝ ՄԱԶԱՔՈՐԶԻ ԱՌԹԻԻ

Սուլթանի գէտ եղած փորձը արդեօք սարգովի չէ:

Ահա քսան օրը կանցնի երկտղի հոշակաւոր պայթումի օրէն, քսան օր ոստիկանական ապարդիւն փնտտութիւններ, քսան օր անազին քանակութեամբ ձերբակալութիւններ անձերու որոնք բողոքովին ապշած են իրենց կասկածելի ըլլալը իմանալով, քսան օր երեւակայական բացատրութիւններ եւ անհիմն ենթադրութիւններ:

Բան մը գտնուած չէ. եւ չը պիտի գտնան ոչինչ որու վրայ հիմնուած բան մը հաստատուէր, որովհետեւ մինչեւ օրս մամուլին յայտնուած անունները բացարձակապէս դժբախտ

անմեղներու անուններ են:

Ասով մէկը մէկը աւելի իրաւունք կունենայ աւելի կամ պակաս շափով հարցաքննիչ դատաւոր ըլլալ. Արդանա թէ շատ մը լուրջ մարդիկ իրենք իրենց ինչ հարցեր կուտան. —

Ինչպէս կըլլայ որ Սուլթանը պաշտպանելու համար նշանակուած պաշտօնները, որոնք պատասխանատու են անոր ապահովութեանը համար, ոչ հրաժարեցուցուած եւ ոչ ալ յանդիմանութեան արժանացած են. եւ ընդհակառակը քաղաքի ոստիկանութեան պետ Ֆէյմի փաշան այսօր աւելի քան երբէք շնորքի արժանացած է:

Ինչպէս կըլլայ որ այս միեւնոյն պետին միջոցով Սկիւտարի մէջ, մահափորձին նախընթաց օրը ուժանակ կը գտնուի:

Ինչպէս կըլլայ պայթումը, որ այնքան մարդոց մահ պատճառեց ոչ մէկ ոստիկանի վնաս հասցուցած չէ, մինչդեռ, սովորաբար, անոնք ամենուրեք որ մըլիւնի պէս կը թափուին երկտղի շուրջը ամեն ինչ արգոսի աչքերով հսկելով:

Ինչպէս կըլլայ որ հարուածին ուղղութիւնը տեղը ընտրուած է կէտ մը որ ժամացոյցին աշտարակին միջոցով արգելուող պրօժեկթիւնը չը պիտի հասնէին մզկիթի դրան:

Ինչպէս կըլլայ ենթադրուած ակաւին գոյութիւնը պայթած տեղում, երբ անկարելի է այդ աշխատութիւնը ընդի ոստիկանութեան մը աչքերուն առջեւ, որ օր եւ գիշեր կը հսկէ ո եւ է անմանօթի ամեն մէկ շարժումը:

Ինչպէս կըլլայ որ, ենթադրելով թէ կառքի մէջ գրուած ըլլայ ուսմը մը կամ գոսիսային մեքենայ մը, կարենայ այդ տեղը աչքան կանոնաւոր ծակ մը փորել. որ կարելի է ձեռքով փորած ընդունիլ:

Ինչպէս կըլլայ որ անիւր քանուրէր կտորէ մը, որ գտնուած է քիչ քանքներուն մէջէն, հասկցուի օտար գործարանատիրոջ մը անունը, մինչդեռ նոյն քիչ քանքներով չը պիտի կրնային հոս անծանօթ մասնաւոր տեսակի կոտք մը վերաշինել:

Ինչպէս կըլլայ որ մահափորձէն 48 ժամ յետոյ ոստիկանութիւնը կը մատնանչէր անվաւեր սպառնազորքը իբր թէ հայ յեղափոխականներու կողմէն զնապաններուն յանձնուած:

Ինչպէս կըլլայ որ նոյն ատեն անծանօթ մը եւ կուզէր ոտմբրով պայտասկ մը զնել պուկար էքզարիարանի գիւնատուներ:

Ինչպէս կըլլայ որ մէկ քառորդ քա

րու մէջ առաջին անգամ ըլլալով Սուլթանը կանգ կառնի մզկիթին շեմին վրայ փայտներուն հետ խօսակցելու պայթումէն ճիշտ քանի մը վայրկեան առաջ:

Ինչպէս կըլլայ որ Սուլթանը ո եւ է յուզում մը չի ունենար մինչդեռ իր շուրջը ամբողջ բաղու թիւնը խենթեցածի պէս էր:

Ինչ շատ պակաս կամ աւելի անխորհուրդ հարցեր կուտան միշտ հիմնովի հին առածին վրայ ի սֆէսիտ-Սիւլթանի Պրօքեստ:

ՉՈՒՆԵՐԻՍ ԵՒ ՍՈՒԼՏԱՆԻ ՄԱԶԱՔՈՐԶԻ

Պրօքեստը, Յայթուելի թերթին Պետէ, Չուրիցերիոյ մարաքաղաքէն հետեւեալը կը գրեն:

Ինչպէս կրիւնի թուրք կառավարութիւնը լաւատեսիկ չէ եղած յայտարարելով որ մահափորձին մասնակցողները Չուրիցերիա եկած են. կամ թէ մեղադրուողները շատ լաւ մպտուած են. որովհետեւ մինչ օրս անոնց հետքը գտնուած չէ ոչ հոս, ոչ Լիւցերն եւ ոչ ալ Փրնէվ:

Առ այժմ անոնց յանձնելու խնդիրը միայն տեսական է կրնան յանձնուիլ թէ ոչ: Այնուամենայնիւ կարելի է որ մէջտեղ բերուին 1882 յանձնումի վերաբերեալ օրէնքին կարգադրութիւնները, նկատելով որ Չուրիցերիոյ եւ Թուրքիոյ միջեւ յանձնումի դաշնագիր գոյութիւն չունի. Գաղաքական յանցաւորներու համար յանձնում չըկայ:

Մինչդեռ ան տեղի կունենայ, թէ եւ յանցաւորը իր յանցանքը պատճառաբանէ քաղաքական նպատակով եղած, եթէ յանցանքը սովորական ոճրի կամ յանցանքի կերպարանք ունի:

Ամէն մէկ զէպքին առթիւ գոյութիւն ունեցող փաստերուն հիման վրայ, Չուրիցերիոյ Դաշնակցայան Սորհուրդը իր ազատ հայեացքներուն համեմատ որոշում կուտայ պատժոյ արժանի յանցանքի մասին:

Երբ յանձնումը տեղի կունենայ, այն ժամանակ խորհրդին կողմէն պայման կը դրուի որ յանձնուած անձը չը հալածուի իր քաղաքական նը պատակներուն պատճառաբանութիւններուն եւ գործերուն համար:

Այդպէս ուրեմն յանձնումն տեղի կունենայ Դաշնակցութեան Սորհրդին որոշումով: Եթէ հալածուողը բողոքէ, հիմնուած յիշած օրէնքին կամ յանձնումի պետական դաշնագրին վրայ:

այդ ժամանակ դաշնակցական դատարանը կորոչէ պէտք է յանձնել թէ ոչ:

Ասոնք են այն կարգադրութիւնները որոնք կը վերաբերին Թուրքիոյ մէջ մահափորձ ընողներուն, եթէ անոնց յանձնումը պահանջուի, եթէ անոնք մահափորձ ընողներ են. եւ եթէ ձերբակալուին: Յանձնումի խնդիրը այն ատեն կախուած է դատարանին կարծիքէն որ պիտի կազմէ յանցանքի մասին որու համար յանձնումը կը պահանջուի:

ՆՈՐ ՍՍՍՏՈՒՍԻ ԳԻՐՔԵՐ

Խմբագրութիւնն ստացաւ հայր Ա. Ղազարեանի թարգմանած բանաստեղծութիւնները հայէ ուրտմ տիկին Վիկտորիա Աղանուր Բոմբելի, «Յաւիտենական զրոյց» վերնագրին տակ: Ինքնք հայերս առհասարակ թիչ բանաստեղծներուն թիւը, եւ այս մտքերով հարուստ ու իրական բանաստեղծութիւնները, թէ եւ թարգմանութիւն, մէր աղքատիկ բանաստեղծական գրականութեան մէջ մի գոհար կրնան կազմել:

Տիկին Վիկտորիա մեծ հոշակ ունի գեղարուեստաւոր Իտալիոյ մէջ եւ ինչպէս բախք հայ ծագում ունի. մինչեւ օրս Իտալիոյ մէջ ան ընդունուած է եղբր իրբեւ արեւելեան ցեղի մը շատաւել, բայց ոչ որոշապէս հայ. ուստի աւելորդ չենք համարիր յարգելի տիկինը հայր Արսէնի օղղած Իտալիոյէն նամակին թարգմանութիւնք ներկայացնել մեր ընթերցողներուն:

Բերուծիա 15 նոյեմբեր 1904

Ազնիւ հայր Արսէն «Յաւիտենական Չրոյց»-իս ձեր գեղեցիկ, հնչուն լեզուով թարգմանելու թոյլտուութիւնը կը խնդրէք ինէ, եւ ես կը պատասխանեմ սրտագին շնորհակալ ըլլալով ձեզի հաճելի առաջարկին համար: Դուք որ Տանդէն ու Լէօբարտին թարգմանեցիք (Խոյ ուրիշ շատեր) յաջողապէս պիտի կարենաք թարգմանել իմ շատ աւելի զիւրին քնարեղակներս, եւ ես հրապարտ պիտի ըլլամ ներկայացուելու եւ ճանչցուելու համար ձեզմով Հաստատանի եղբայրներուս, այն ըզկտ-

ուածին, որուն համար իրաւցնէ պիտի ուզէի որ Մուսա կարենար հնչեցնել երգ մը այնպէս ահեղօրէն մեծաշուք՝ որ դահիճներուն ձեռքը դողացնէր:

Անձնուէր եւ երախտապարտ Վիկտորիա Աղանուր Բոմբելի

Այս գեղեցիկ գիրքին գինն է 2 Ֆրանք:

Ընթերցասէր հայերը պարտաւոր են այս գեղեցիկ բանաստեղծութիւնները որ օտարութեան մէջ բացուած հայ տաղանդին արդիւնքն է իրենց սիրելի գրքերու շարքին մէջ ունենալ:

• •

Երկրորդ հետաքրքիր նոր գիրքն է Ամերիկա հրատարակուած «Հայկական Ճգնաճումն և Վերածնութիւն»

Մ. Սմբատ Գաբրիէլեանի:

Այս գիրքը քննադատութիւն մըն է մեր վերածնութեան և յեղափոխական շարժումներու: Ներսէս պատրիարքէն սկսեալ մինչև վերջին յեղափոխական գործիչները պիտի գրարիէլեանի կարծիքով համոզումով սխալած են եղեր: Նոյն մտքերը են ինչ որ տարիներ առաջ Չորանեան կը յայտնէր: Այդ գիրքը Ամերիկայի մամուլի քննադատութեան նիւթ դարձաւ, ուր բաւական ճիշտ նկատողութիւններ ըրին պարոն Գաբրիէլեանի հայեացքներուն, գատողութեանց պակասութեանց մասին:

Մեր կարծիքով Գաբրիէլեան կը ներկայանայ արտակարգօրէն մեծամիտ, ինքզինքը նուրբ փառայի պէս մտածող մը ներկայացնող, որը իր մեծ խելովը հանդերձ կրնար շատ սխալ դատել հայ վերածնութեան ու շարժումներու մասին, որովհետեւ բոլորովին կտրուած էր հայ կեանքէն, ու անգիտակից անոր վիճակին: Պահպանողական դատող մը ներկայ պարագաներու

մէջ իր դատը շատ գիւրիւն կրնայ պաշտպանել, որովհետեւ յեղափոխական փուլին մէջ, երբ գեռ ան Գանգած չէ իր վերջնական նպատակին իր հաշեմատեանի մէջ միայն ձախորդութիւններն են որ արձանագրած են շոշափելի կերպով: Յեղափոխական շարժման մը գրական հետեւանքը կամ իրական լացասական հետեւանքը անոր վերջը կարելի է տեսնալ: Յեղափոխական շարժում մը որ շափալ որ ձախորդութիւններու հանդիպած ըլլայ, անյաջող չէ ելլալ ան կը շարունակուի, երբ անոր հետեւողներուն թիւը համեմատաբար աւելի կը շատնայ: Ժողովուրդ մը հակառակ իր կրած մեծ ազնեաներուն երբ չի գաւաճանէր յեղափոխութեան, այդ պայցրցը է թէ ան արդէն խաղաղ վերադիմութեան միջոցներէն ձեռք քաշած է որովհետեւ անոր հնարաւորութիւնը չունի տիրող ուժերին պայմաններէն ստիպեալ: Ժողովուրդ մը հրամանով ոչ յեղափոխութեան կը փարի և ոչ ալ խաղաղ վերածնութեան: պայմաններն են որ զինքը կստիպեն այս կամ այն ձեւով իր իրական վերածնութիւնը փնտռել: Եւ պիտի Գաբրիէլեան ընկերային կեանքին այս հիմնական օրէնքը մոռցած կամ չը հասկցած կերեւայ:

Ն.

ԴՆԵՐԱՍԱՆ ԳԱԼՅԱՅԵԱՆԸ

Քանի մը օր է որ Վառնա կը գտնուի դերասան Գալֆայեան, ըստ բարիքեան օտարեկեղծութեան հայ թերթերու Ազատեանէն յետոյ երկրորդ հայ դերասանը որ ընդունակ է «Համլէթ» իր սրտակարգ հոգեկան նուրբ յուզումներով ներկայացնել բեմին վրայ և հիացնել Համլէթը ստեղծող Շէքսպիրին տաղանդովը: Ի՞նչք

զինքը դեռ բեմին վրայ տեսած չենք. սակայն ինչպէս ըսինք թերթերու միջոցաւ արդէն լաւ կարծիք ունինք, ու յուսով ենք թէ Վառնայի հայ հասարակութիւնը իրական բախտը պիտի ունենայ վերջապէս Համլէթ մը տեսնելու:

Պ. Գալֆայեան արդէն սկսած է տեղւոյս թատերասէրներէն և երգեցիկ խումբէն ընկերներ ընտրել քսան օրէն կամ ամէ մը բեմ ելլալու համար: Բերնի Գալֆայեան ոչ միայն բեմ պիտի ելլայ այլ և ահագին շարժարանքներով, հակառակ իր թոյլ կազմին, պիտի աշխատի Համլէթ մը խաղալու համար շատ անպատրաստ մարդոցմէ գոնէ իր խաղացածին ապաւորութիւնը և արժէքը չը նսեմացնելու շափով խաղացողներ պատրաստել: ու մենք յուսով ենք թէ տաղանդաւոր արթնալի ընկերակցողները ամեն ճիշդ, աշխատանք պիտի թափեն իրենց արժէքաւոր վարպետը պարզերես հանելու: Չը բաւեր որ Գալֆայեան ինք լաւ խաղայ, ընկերակիցները պիտի համոզումը ունենան թէ իրենց վրայ խոշոր պարտականութիւն մը կը դրուի որ այդ շարժարանքները յանձն առնող վարպետին իրենց վրայ թափած ճիշդը պատկուին: Իսկ Վառնայի հայ հասարակութեան զեռ այժմէն հրաւեր կը կարգադրէ պատրաստ ըլլալ ներկայ ըլլալու պիտի Գալֆայեանի Համլէթին...

Ինչեւ պիտի օր սրճարանի մէջ իմացայ որ պիտի լինէր «Սթէլլո»-ի ներկայացման տոմսակներ վաճառած ատեն ըսեր են որ Գալֆայեան ալ կը մասնակցի եղեր այդ ներկայացման: Եթէ այդ ճիշդ է, աղէկ միջոց մը չէ հասարակութիւնը գրաւելու համար: Մենք մեր դերասաններուն ալ, եթէ իրօք ատոնք դերասանութիւնը կընեն իբրեւ գեղարուես-

տի ծառայողներ երթան Գալֆայեանի «ՀԱՍՏԷԼԻ» տեսնելու: քիչ մը արուեստ ընդունակութիւն տաղանդ տեսնան, չափեն իրենց ուժերն և այնուհետեւ որոշում տան Շէքսպիրի գլուխ գործոց բիէսնելուն մէջ բեմ ելլալու: Ընչդ է աշխարհի մէջ հաստ ու բարակ մէկ գին է, բայց վայ բարակ մանողին:

Յօդուածս վերջացնելով կատարեալ յաջողութիւն կը մագլթեմ պարոն Գալֆայեանի և իր աշակերտներուն—որպէսզի մենք Վառնա ինկած հայերս ալ կարենանք վերջապէս «Համլէթ» մը տեսնալ ու ազատիլ այն գէշ, գեղարուեստը մեռցնող սպաւորութիւններէն զորս մեր վրայ թողուցած են մեր բիացային խղճուկ Համլէթները:

Գեղարուեստագետ

ԹԱՏԵՐԱԿԱՆ ՔՐՈՆԻԿ  
ԱՆՁՈՒԳԱԿԱՆ ԵՐԵՎԱՆԻ  
Օ Թ Է Լ Լ Օ

Սովորական ճամբորդութիւնով, զործերուս պատճառաւ անցեալ օր ստիպուեցայ այս անգամ ալ Սօֆիային Վառնա քաղաքը գալ ժամանակ մը մնալու համար, մինչև գործերուս աւարտման օրը: Որով այս ճամբորդութիւնս պատճառ եղաւ նաև իմ տարիներէ ի վեր փափաքանացս իրազորումը որ է անձնական օդափոխութիւնս: Սակայն գրութեանս կարեւոր ըսելիքները այդ չէ հապա համառօտակի քննադատութեան մը համար է որ վարը պիտի պարզեմ: Անցեալ օր, օգոստ. 3-ին գիշերը ըստ սովորականին ամեն գիշերուան պէս Վառնայի «Հաճի-Բանաթ» ըսուած զբօսատեղին երբ դարձրատուն մը նստած էի յանկարծ ծանօթ տեղւոյս հայ բարեկամներէս մին մ'օտեանալով ինձ առաջարկեց որ եթէ կարելի է ընկերանամ իրեն, ընկերացայ ու բաւական պտոյտ ընկել յետոյ բարեկամիս զրգմանը վրայ որոշեցինք ՎԵՍԷԼՕ հայ դերս. խումբի թատրոնը

Ա. ԱՍՏԵՆԵՍՏՐՈՎ  
ՎԻԿՏՈՐԻԱ ՊԱՎԼՕՎԻԱ  
(Տօնախմբութիւն)  
(Գրագիտի յիշողութիւններ  
օրից. Ամրան արկածներ  
բաւական սարսիհակ հա  
սարակութեան մէջ)  
(Խարգմ. ուսեքէնից)  
Ժ.  
(Շար. Ասխարհ քիւրկն)  
Առաջինը անկարելի է սեռերը հէնց  
նրա համար են ստեղծված, որ սե  
ռական կեանքը գոյութիւն ունենայ.  
Գ. Կուզես թող կիներ լինի բժիշկ,

փաստաբան. թէկուզ հասարակագե  
տութեան նախագահ, Հոռոմի Պապ,  
այնուամենայնիւ նա պէտք է տուժէ  
արքայութեան օձի հետ տեսակցու  
թիւն ունենալու պատճառով և ցա  
ւերով դաւակ ծնի: Երկրորդ կամը  
արդեօք կարելի է չը գիտեմ. բայց  
յաճախ եւ յաճախ տեսնում եմ կի  
ներ, որոնք ենթագրում են որ կա  
րելի է, որոնք հասկանում են թէ կը  
նով իրական ազատութիւնը կայա  
նում է ոչ թէ այր մարդոց կողմից  
իրենց տրված այրական աշխատու  
թեան սեռակներում այլ նրանում որ  
սեռական բնագործ դադարէր աղբիւր  
եւ նշան լինելու թոյլ սեռի գորեղ  
սեռին հնազանդելու. որ այդ բնագ  
որ դադարէր կնոջ և այր մարդու  
յարաբերութիւնների գլխաւոր յենա  
րանը կազմել, որ սեռի զատման ա  
զատութիւնը եւ սեռական բարոյա  
կանութիւնը նոյնքան լայն լինէին  
եւ Սեայի համար, որպիսին պատմա

կանօրէն իրեն համար ձեռք է բերել  
արու Աղամը:  
Այրական բարոյականութիւնը հա  
սարակութեան մէջ կնոջը այնպիսի  
մի դիրք է տել, որ սեռական զգա  
ցումը կնոջ դարձնում է կամ թուխ  
կամ պոռնիկ և կամ նետում Սցիլ  
լայի եւ Սարպիտայի մէջտեղը, մին  
չև Աստուած մահ կը տայ: Այրական  
բարոյականութիւնը կնոջը կպպել է  
խղճի հետ ծանր խորամանկ պոյմա  
նազրով, որի համաձայն այր մարդիկ  
թէ իրենց եւ թէ հանրային կարծի  
քի առջև միշտ մնում են կարգին,  
վայելուչ եթէ նոյն իսկ սեռական  
յարաբերութիւնների ազատութեան  
մէջ գերազանց էին ամենամասնաձ  
պոռնիկ կնոջը, կինը այդ բարոյա  
կիտութեան համաձայն. երբ թոյլ է  
տալիս իրեն ազատօրէն վարելու իր  
սեռական յարաբերութիւնը, արդէն  
անբարոյական եւ աչքից ընկած է հա  
մարվում եւ իր մեղքը կարող է քա

ւել այն ժամանակ միայն եթէ իս  
կոյն շղթաներ կը հագնի եւ կը պաս  
րասովի այնուհետեւ ենթարկվել ա  
մուսնական պայմանագրութեան (ե  
կեղեցական թէ քաղաքական այդ  
միեւնոյն է), եւ նրա առօրեայ բո  
լոր հետեւանքներին: Սեռերի այդ  
տեսակ յարաբերութիւնը անճոռնի և  
կեղծ գտնող կիներ կրկնում եմ այժմ  
յաճախ եւ տեսնում:  
Բիէրնսօնի հուշակաւոր «ձեռնո  
ցում», հերոսուհին իր սերունդ օ  
րիորդներին մէջ սեռային հաւասա  
րութեան հիմնական եւ արտաբա  
նական պայմանը հետեւեալն է դը  
նում.—Եթէ եւ սեռական վեանքի  
իրաւունք չունեմ մինչև ամուսնու  
թիւնը, ուրմն եւ դու չունես (այր  
մարդ). եթէ եւ պարտաւոր եմ կոյս  
ամուսնանալ, դու էլ կոյս ամուսնա  
ցիր: Գեղեցիկ կանոններ են և լա  
կը լինել եթէ քարոզվէր հրեշտակա  
յին, բայց ոչ մեղաւոր մարդկային

մտնել և ուղղուեցանք դէպի շէնքը թատրոն օրորտի առջեւ, ու ըստ ազգարարութեան տեսանք թէ խուժ-ըբը այդ գիշեր կը խաղար «Օթէլլօ» արամը ինպատկառ կատակերգաք պ. Պէնյանի որը պիտի կատարեր Օթէլլօ դերը: Աւստի ազգարարութեան համեմատ զարմանալով ուղեցինք անմիջապէս թատրոն մտնել հանդիսատես ըլլալու սոյն Անգուգական երեկոյթին:

Աւ ճիշդ ժամը 10 ու կէսն էր մը տանք թատրոնը ուր դիմած էր հոծ բազմութիւն մը, անհամբեր սպասելով մեզ հետ արամին վարագոյրին բացուելուն:

Վերջապէս վարագոյրը բացուեցաւ խաղին, որը արդէն գիտնեք թէ Շէքսպիրեան տրամներու մէջ առաջին մէկ դժուարամարս խաղն է որը ըստ Վէստի Լօ խուժերի թանուցման այդ կըշիւ պիտի մարտնէր: Անգուգական կերպով բայց երբ տեսարանին մէջ առաջին քայլին իսկ տեսանք խաղին անկարող դերակատարներու խուսակցութիւնը ու նաեւ Օթէլլօ դերը կատարող պ. Պէնյանի անկարողութիւնը որի ո՛չ կարգուածքը, ո՛չ ձիւղքի, ո՛չ տեսքը և ո՛չ ալ խուսակցութիւնը յարմար էր Օթէլլօ դերը յատկացնելու, այս բանին վրայ արդէն նոյն վայրկեանին իսկ զուշակեցինք այդ (առանց ամաչելու ըսուած) անգուգական երեկոյթին սկզբէն մինչեւ վերջ ինչ անտանելի ընթացքով: Եւ ցաւ ի սիրտ սկսանք թէ մենք թէ հոծ բազմութիւնը քմծիծաղներու դիմելու...

Աւելորդ կը համարեմք խաղին բոլոր մասերը քննադատել որովհետեւ ճիշդ ըսելով այդ գիշեր դերակատարներու աւճոռնի, տանձեւերէն եւ կամաց խուսակցութիւննէն բան մը չը հասկցանք մասնաւորապէս զիտողութեան արժանի եղան Տէգտէմօ: Նայի դերը կատարող Սիլիորդ Ռօզալին որ իր խուսակցութեանը եւ տանձեւերով անկարող եղաւ Տէգտէմօնայի դերը կատարել, գոնէ քիչ մը: Նաեւ Նախն կատարող պարոնը որ շատ ու շատ հոռի էր Նախն մը ըլլալէ: Անիբաւութիւն պիտի ըլլայ եթէ մտնամ յիշել պ. Սրամեանը, որը իր հայրական դերը կրցաւ իր փորձառու ձրբքով դուրս բերել յաջո-

(\*) Մենք աւելի լաւ համարեցինք անտանելի երեկոյթ կոչել քան թէ անգուգական:

ղութեամբ ունկնդրել տալով գոնէ քանի մը վայրկեան, թատերասէր հասարակութիւնը իրեն:

Քննադատութիւնս վերջացնելէս առաջ պիտի խնդրեմ կատակերգաք պ. Պէնյանէն որ ի սէր դերասանական արուեստագիտութեան ուրիշ առթիւ իր ծիծաղաշարժ խաղերու շըրջանակէն դուրս ելլելով չի ձգտի Շէքսպիրեան տրամներ խաղալ որը շատ հեռու է իր ունեցած ձիրքերէն:

ՅՈՒՆԱՆԿՈՒԹԻՒՆ  
1905 4 Օգոստոս  
Վ ա ո ս ա

ՌՈՒՍԱԿԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԸ  
— ( ) —

Ռուս կառավարութիւնը համոզուած է որ սանդիւմ մը չը պիտի կրնայ գտնել Ներսիսյան պատերազմը շարունակելու համար. սակայն եւրոպական կրամատէրներուն այս ոչ կարեւոր կարեւոր պատճառ մը չեն ընդունիր ձառնելու հաշտութիւն կրնաքելու ինչ գնով ալ որ ըլլայ: Եթէ այս դիրքը նոր պլիւս քի մը չէ ուրեմն ան է որ կը կարծէ թէ նոյն Ռուսիոյ մէջ պիտի կարենայ միջոցներ գտնուլ պէտք եղածին շարք երկար պատերազմը շարունակելու համար:

Բայց ասոր համար պէտք է պատերազմը ժողովրդական դարձնել. զայն ժողովրդի աչքին ազգային «սրբազան պատերազմի» վերածելու ասկէ կառաջանան բարենորոգմանց խոստումները: Եթէ կառավարութիւնը կարենայ գրաւել հանրային կարծիքը եւ իր բաղձած շարժումը ստեղծել այն ատեն զայն պիտի շահագործեն եկեղեցական հարստութիւնները գրաւելու համար: Այս հարստութիւնները պատերազմական կարիւր գուժար մը կը կազմեն: Իրօք, անկարելի է ճշդիւ որոշել այդ հարստութեանց արժէքը: սակայն կ'ըզրակացնեն որ 15 միլիոն շատ պակաս չը պիտի ըլլայ: Ասոնք գրամական զժուար իրագործուելու հարստութիւններ չեն այլ թանկագին նիւթեր, ոսկի եւ ազամանդեղէն խոշոր քանակութեամբ կուտակուած վանքերուն մէջ: Ժողովրդային կարծիքը ստեղծուելուն պէս, եւ հոգեւորականութիւնը գրաւուած ի նպաստ

պատերազմի, շնորհիւ պատիկ հնարովի հրաշքի մը, սուրբ Սերաֆինի մը յայտարարութեան որ ըսելու է թէ Աստուած կը հրամայէ որ եկեղեցիին գանձերը տրուին Ուղղափառութեան յաղթանակին համար եւ անա այդ հարստութիւնը կանցնի կառավարութեան ձեռքը որ այսօր դասարկ մնացած է:

Բեթերովի մէջ ընդունուած բոլոր առանձնաշնորհուելու երբ զուր են, ես ի վիճակի եմ հաստատել թէ Ձեմաթօններուն համաժողովին դիւանը բացարձակօրէն համոզուած է որ այդ ծրագիրը թէեւ շտկուած բարեփոխուած չը պիտի ընդունուի ապագայ համաժողովէն: Ձեմաթօններուն բռնելիք գիրքը նոյն պիտի ըլլայ ինչ որ էր այդ ծրագրին ձեւափոխուածն առաջ. զիս կը վստահեցնեն որ զըլ խաւոր հարցը, որ յետաձգուեցաւ վերջին համաժողովի մէջ, իմա պոյթօթը ցարին ընդունած խորհրդատու ժողովին եւ ժողովրդին ընելիք կողմ այս անգամ պիտի ընդունուի անագին մեծամասնութեամբ մը:

Սարը այս կացութեան արդէն սեղեակ է. ուրեմն աւազատելի է որ զեռ կրնայ մտածել թէ պիտի կարենայ առաջ բերել, ծրագրին հետ չակումովը, ազգային եւ օրինաւոր շարժում մը, որուն վրայ ինք պիտի հիմնուէր, անյաջող պարագային, փոփոխելու վրջին վայրկեանին վիթխիւն առիթը հրահանքները: Ձեմաթօնի շարժման պետերուն մտքերը այնպէս են որ անկարելի է չարժուածը կասեցնել. եթէ Ազգային ժողովը օրէնսդիր եւ նախարարութիւնը պատասխանատու չըլլան:

Կիմանամ որ Բեթերովի մէջ ընդունուած Սահմանադրութեան հրուշակուած Նոյն իսկ ընդհանուր քաղաքական յանցաւորներու Ներուժը միասին հետեւանք պիտի ունենայ տէնօրիստներու գործունէութեան աւելի սաստիկօրէն վերստուգուած ինչ պատրաստուած է ոստիկանութիւնը կատարելապէս անշարժութեան մէջ դնելու համար: Պէտք է սերտակաւ սուսափելի զկպեր սպասել:

Լր. Գուր. է:

ՊԵՆՅԱՆԻ ՎԵՐՄԵՐՈՒՄԻ ԻՆԻՏԻՒՆԸ  
— 0 —  
(Միւս համարէն սկսելիք մեր բանասիրականը)

Ըլլալով մեր այս թարգմանութիւնը, շատ արտակարգ հատուած մը անգլիական քրիստոնեւորութեան, աւելորդ չենք սեպել մէկ քանի տեղեկութիւններ տալ ընթերցողներուն այդ տոթիւ, յայտնելով միանգամայն թէ ինչ պարագաներուն ներքեւ եւ ինչո՞ւ համար իրարգմանեցինք զայն:

Օր մի. երբ անգլիական հրատարակիչ գրաւանատի մը գրացուցակը կը թղթատէի, աչքիս հանդիպեցաւ, սկիւպիտի Ազգիկներու Գրադարանի րաժնի մէջ այդ «Ինչ քի» անունը, որուն կ'ընկերակցէր նաեւ «Հայկական Ռոմանս մը» լրացուցիչ խօսքերը:

Անգլիական գրացուցակներու մէջ, մանաւանդ 1895-96 էն առիթն, հայ անունով եւ հայ կեանքով ( ) վէպերու հանդիպելը հազուադէպ բան մը չէր մայց, սեծամասնաբար, ինչպիսի՛ լըրճուկութիւններ, ինչպիսի՛ այլանդակ անհամար թիւներ, ինչպիսի՛ ալա տր. Ռէյնօլտսեան փաստաթանուցութիւններ, Խրատներ ( ), միջոցներ ( ), եւ, ամենէն աւելին, վեր, զէնքի վեր, անհունէն ու անսահմանէն վեր նախն ինչպիսի՛ դերերստիք պատուելի իրաջող քարոզներ, — հոգ չէ՛ թէ վեր նայած — գահու գահ տակէն, գոյուութիւնը խըն...

Անոնք որ անգլիական գրականութեան մէջ մտած են կրնան հասկնալ այս խօսքերուն իմաստը: Աւ այդ «Ինչ քի» վէպին կը հանդիպէի այնպիսի ատեն մը, երբ զեռ քանի մը ամիսներ առաջ աւարտած էի ուրիշ հայակերտ վէպ մը «Սփրատի Ափսրուժ» անունով — առատանունը դաշտէն վերադարձող վատակաւոր մշակի մը ներշնչումները, առաջին խօսքը աւետարանով սկսած եւ վերջինը իրեն նմ մարջան աշխատատրի մը չեմ յիշեր: Լօնտօնի ո՞ր ժողովարանին մէջ արտասանած քարոզով աւարտած, որ տնճարութիւնը, անթանութիւնը եւ այս բոլորին հետ միասին ծիծաղելիութիւնը այն աստիճան եկած է, որ պժգանք կազմել իր ազգին արժանապատուութեան թեթեւ անտիճան մը միայն նախանձախնդիր ու է՛ անհաստի:

Աւ զեցի նոր կրօնական այլանդակութեան մը չը հանդիպել, քննելով

հասարակութեան մէջ: Նրանք ներկայացնում են երկու տեսիլ յայտնի իրաւանց սահմանափակումը եւ համապատասխան փոխադարձ ծանրութիւններ դնում սեռական յանձնառութեամբ: Մարդկային ցեղին ոչ սահմանափակումները եւ ոչ էլ ծանրացումները հաճոյալի են, մանաւանդ նրա զօրեղ կէսին: Կնոջ ապագայում ունենալիք իրաւունքները հասարակութիւնը ոչ թէ նշանում պէտք է կայանայ որ այդ մարդը իր իրաւունքները հրաժարվի, այլ նրանում որ կինն է, բոլոր այն իրաւունքները ստանայ, ինչ որ այդ մարդը ունի: Այդ իրաւունքները այնքան շատ եւ այնքան գանապականեր պարզեւնաւոր են, որ սեռական յարաբերութիւնների ազատութեան խնդիրը այնքան տիրող եւ բացառական դիրք չը պէտք է կարողանայ ընդունել ինչպէս վախեցնում են կանանց սքաւտութեան թշ-

նամները: Մեր ժամանակի մարդոց առջեւ սեռական պահանջից առաջ գալիս են բազմաթիւ կենսական եւ հանրային խնդիրներ. եւ եթէ սեռական հարցը այդ մարդու մէջ գերազանցում է վերջին հարցերին, այդ տեսակ այդ մարդը չէ վայելում հանրային համակրութիւնը եւ յարգանքը, այլ համարվում է այլասերված անսովոր եւ նեարդային կնամոլ: Նոյնպէս եւ կանանց մէջ սեռական յարաբերութիւնը կը կորցնէ իր առանձնակարգ նշանակութիւնը, երբ հասարակութիւնը չի կարողանում առաջ կնոջ հանրամարդկային յատկութիւնները հաշի առնել: Աչքի զարկող կիններ հասարակութեան կողմից այդ տեսակ յարաբերութեան արժանանում են եւ ներկայում: Նշանաւոր կնոջ հետ վարվում են առանց նրան հարցաքննելու սեռական յարաբերութիւնների տեսակէ-

տից: Ես գիտեմ որ Սօֆիա Կոլոլեովսկայան մեծ կին էր և այդ կը բաւէ ինձ, առանց նրա ընտանեկան կենսագրութեան: Ինձ ինչ պէտք. նա ամուսին ունէ՞ր թէ ոչ: Լաւ էր ապրում իր մուսնու հետ, թէ ոչ, հաւատարիմ էր մտնունուն թէ ոչ: Այդ կնոջ գործունէութիւնը ընտանիքում չէ արտայայտված եթէ սեռական կեանքն էլ անարատ էր — աւելի լաւ. եթէ ոչ — մարդկութիւնը, եւ գիտութիւնը որի համար Սօֆիան այնատեց ամբողջ կեանքում, շատ քիչ է հետաքրքրվում դիւնով: Միթէ Ժօրժ Ջանար, Ջօրժ Էլլիօտը վ. Կրեստովսկին կանացի անուններ են իրենց միջոցաւ ընթերցողների համար. ո՞վ բացի կեղծաւորից եւ հիւանդ իգամոլից ընդունակ է իր հետաքրքրութիւնը զբաղեցնել Մեծն Եկատերինայի տարփածոների կուլմաներով եւ յատկութիւններով Ան-

հատ աչքի զարկող կանանց վիճակը պիտի տարաձգի վաղ թէ ոչ և բոլոր անկախ ապրող կանանց համար: Ներկայում հաճաք քան չուրի, կը լինի ժամանակ որ հանրային անհատը սեռ չի ունենայ, Եւ արդէն սկսել են կիններ երեւալ բաւական համարձակ, որոնք սեռական կեանքին նախն են բոլորովին այդ մարդու տրամաբանութեամբ և աչքերով: Այսինքն այդ կինները սեռական կեանքում չեն գտնում իրենց գոյութեան գիտաւոր կէտը, այլ համարում են ֆիզիոլոգիկան գործունէութեան մի ճիւղ զարգարված հոգեկան գեղեցիկ յուզումներով և կարողանում են, երբ նրանցից հաշիլ եւ պահանջում, այդ մարդոց նման պատասխանել, դայդ իմ խղճիս գործն է, բայց ոչ ձեր: Այդ տեսակ կիններից մէկին փորձեցի նկարագրել, յարող թէ ոչ, եւ չէ որ պէտք է դատեմ:

այդ եւս, սակայն վերջի վերջոյ դրո- կեցի հարկ եղածը եւ գիրքը ստացայ- Այս անգամ չը զղջացի Ընթեր- ցումը այնքան ոգեւորեց՝ որ անմի- ջապէս ձեռնարկեցի նաեւ թարգմա- նութեան:

Պիտի հարցումի, թերեւս, թէ ունի սա հայկական իրական կեանքը պատ- կերացնող ու եւ գրոյժ: Ո՛չ, եւ գուցէ նուազ քան նախորդները, ո- րովհետեւ որքան որ գիտենք մենք մեր երկիրը, դեռ երբէք գոյութիւն ունեցած չեն հոն թիւրք օֆիսերներ, որոնք հայկական հրոսակախմբեր ա- ուջնորդեն, եկած ըլլալով երիտա- սարգ թիւրքերու բանակէն. դեռ եր- բէք գոյութիւն ունեցած չէ հոն Բագրատունեան տան վերջին շտա- ւիդ հայ աղջիկ մը, որուն լեզուին ներքեւէն գուրս թոչին ժան տ'Արք, Կիյոմ Դէլ, Ուուլըս, Կոբերնիկոս եւ այլ նման անուններ եւ որուն սիրա- յին ուժգնութիւնն ու ինքնանուի- րումը նիւտան ալ կը դերադասէ. ինչ- պէս նաեւ գոյութիւն ունեցած չէ Բագրատունի նախահայրերէն մնա- ցած յատակները ոսկիով դիզուած ա- պարանքներ:

Ինչո՞ւ ուրեմն նախապատուութիւն մը տուինք այս վերջնոյն: Որովհե- տեւ, հեղինակին գրելակերպը, այն ինքնագոհ բաւականութիւնը, որ վերջապէս, օտարներն ալ նամանա- ւանդ Անդրկոյններու նման օտար- ներն ալ գտած ու տեսած են մեր մէջ ստրուկ, հլու, հեծող անակա- նութենէ զուրկ եղողէ մը տարբեր մէկը, որ գիտէ խօսիլ, շարժիլ, կրու- ուիլ, ու այգայիսի երեւակայական հայ աղջկան մը ներշնչումներն ու մտածումները յանձնած են իրբեւ օրի- նակելի դիւցազնութեան տիպեր ի- րենց մատաղ սերնդին ձեռքը. պէտք է խոստովանիլ, ոգեւորեցին մեզ, եւ մէկ կողմ նետելով եւ անտեսելով գտնուած բոլոր թերութիւնը, յանձն առինք թարգմանել, թէեւ ատի գա- նազան պատճառներով երկար ատեն մնաց ձեռագիր:

Ուրեմն, նուիրելով մենք այս կը- տորը հայ իգական մատաղ սերնդին մեր կողմէն՝ նոյն մտադրութիւնը ունեցած կըլլանք, ինչ որ ունեցած է Պ. Աւետիս Պէլքը:

Հեղինակը, թէեւ բան մը չըսեր ինք, բայց այս կտորը գրել թելադ- րուած կերեւի աշխատասիրութենէ մը. — «Հայաստան եւ իր Տառապանք- ները», — ամփոփ եւ բազմակողմանի գրքոյ մը հայ անցեալ եւ ներկայ պատմութեան, որ հեղինակած է պ. Ուրիթըլ 1896 ի զգալներուն եւ որուն հազարաւոր օրինակները Մէկ շաբ- թուան ընթացքին սպառելով մա- մուլի յանձնած են գործը երկրորդ տպագրութեան համար:

Այս ենթադրութիւնը, կընենք, ո- րովհետեւ շատ տեսանելի համանման արտայայտութիւններ կան, մանա- ւանդ քաղաքացի մէկ երգը, իբր թէ ատի հայ հաւատարմ ու ազատութեան նահատակներուն երգը եղած ըլլայ:

Հայ վայրերու եւ անձերու անուն- ները, մեծաւ մասամբ հնուու ճշգու- թենէ, թողուցինք ինչպէս որ էր:

Մ. ՅՈՒԱԿ

Հ Ա Յ Կ Ա Կ Ա Ն Կ Ե Ա Ն Ք

Օգոստոս 3 ին Բեթերսպուր- կէն պ. հ. գործ. կը հեռագրեն հետեւեալը.

Կայսերական հրովարտակով մը

հայերուն վերադարձուեցաւ ի- րենց զպրոցները, իրենց դրա- մադուլութեան միասին ինչպէս և եկեղեցիներու և վանքերու հարստութիւնները անոնք պիտի վերաբացուին 1879ին ազատա- կան օրէնքին համաձայն, որ փոխուած էր 1903ի հրովարտա- կովը:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թ Ո Ւ Ր Ք Ի Ա

Օգոստոս չորսին Պոլսէն կը հե- ոագրեն «Վէշէրն» Բոլշակ պու- կար թերթին հետեւեալը.

Ոստիկանութիւնը երէկ, պու- կար գործակալութեան ետեւը գտնուող տան մը մէջ խուզար- կութիւն կատարելով գտած է քանի մը ռումբներ: Միւս կող- մէն ալ կը պնդեն որ իրմիրի մէջ ձերբակալուած է անձ մը որ կուղէր ռումբ նետել վալիին վրայ: Այստեղի ոստիկանու- թիւնը խուզարկութիւններ կա- տարած և 120ի շափ ռումբ գտած է:

Պոլսոյ ոստիկանութիւնը իմ- ցեր է որ շատ մը թուրք սպաներ զաղտնի կերպով ատրճանակներ գնած են: Վախ կայ որ Ուլթանի գահը բարձրանալու տարեգար- ձին նոր մահափորձեր տեղի ու- նենան:

— Կը կարծուի որ Խուրքի- յ պատերազմական պատրաստու- թիւնը Սէլանիքի մէջ Եւրոպայի վրայ ազդեցութիւն գործելու համար է պետութիւններուն Մա- կեղանիոյ նյութից քօնթրօլ պա- հանջելուն առթիւ:

Թ Ո Ւ Ս Ի Ա

Քիչնեւն ռումբն թերթերուն կը հայորդեն որ Պէսարապիոյ մէկ քանի գիւղերու մէջ մօլտօ- վանները ըմբոստացած են, ա- նոնք կուզեն որ ռումբն եկեղե- ցիներու զպրոցներու և բոլոր հիմնարկութիւններու մէջ ռու- մբն լեզուէն գործածուի. կը պա- հանջեն պատերազմի դադարու- մը և իրենց ներկայացուցիչնե- րու մասնակցումը ռուս ազգային ժողովին:

Ըմբոստացած գիւղերը զօրք զրկուած է: գիւղացիները ժո- ղովներ կընեն զպրոցներուն և եկեղեցիներուն մէջ, շատ ձեռքեր են իրենց քահանաները ռուս մոլութեան համար:

Քիչնեւի մէջ 7 տուներ հրդեհ- ուած են:

— Կուրլանտիոյ մէջ գիւղա- կան ապստամբութիւն ծագած է. ոստիկանութիւնը անկարող եղած է զուպիլ, ամբոխը թալանած է 22 գիւղեր, մէկ քանի կալուածներ

և այրած զօրաշարժի յանկերը և ուրիշ կարեւոր զօկիւմաններ: — Օգոստոս 3ին Բեթերսպուր- կէն կը հեռագրեն թէ խորհրդ- դատու ազգային ժողովին հաշա- կումը տեղի պիտի ունենայ Օգոս- տոս 6ին:

ԳԵՐՄԱՆԻԱ ԵՒ ԼԵՂԱԿԱՆ

ԱՊՍՏՄԱՐՈՒԹԻՒՆ

Գերմանական զաղտնիք ոստի- կանութիւնը Պոլսոնեղներու մեծ ապստամբութեան ծրագիր մը բռնած է, որ պիտի պայթէր այս աշուն: Կըսեն թէ բռնուած են մեծ քանակութեամբ տօքիւման- ներ որոնց բովանդակութիւնը ե- թէ հրապարակուի Գերմանիոյ և Ռուսիոյ միջեւ ընդհարում պիտի տեղի ունենայ:

Այդ ապստամբութիւնը պատ- րաստող զաւագրութեան կը մաս- նակցին եղբր Ռուսական Բոլոնիոյ ազնուականներէն ինչպէս նաև Բոլոնիացի մեծ պանքէրներ Պերլինէն, Համպուրկէն, Ֆրանք- ֆուրթէն, Գեյսլէն և Բրեսլաուէն, որոնք կը շահակցին ռուսական Բոլոնիոյ առեւտրական մեծ ձեռնարկներու:

Մրագիրը եղած է ապստամ- բութիւն բարձրացնել նոյն ա- տեն թէ քաղաքներու և թէ գիւղերու մէջ իբր ընկերվարա- կաններու զեկավարութեամբ, բայց իրապէս յեղափոխական կօ- միտէի մը զեկավարութեամբ, ո- րուն ամբողջապէս Գրաքով քա- ղաքն է. Կալիցիոյ մէջ, իսկ մասնաճիւղերը Իրուսիոյ Գէնզին և Ռուսիոյ Վարչաքա քաղաքին մէջ:

Ապստամբութեան նպատակն է առաջ Ռուսական Բոլոնիան ան- կախ հաշակել վերջը միանալով Գալիցիային աւստրիական հովա- նաւորութեան տակ վերականգնել Բոլոնիոյ թագաւորութիւնը:

Գերմանական թերթ մը կը հաղորդէ որ ռուս կառավարու- թիւնը Գերմանիայէ պահանջած է բռնուած տօքիւմաններու բո- վանդակութիւնը սակայն Գերմա- նիա վճռականապէս մերժած է: Մերժումի պատճառը այն է որ կընար երեւան զալ շատ հարուստ Գերմանիացիներու մասնակցու- թիւնը այդ գործին որ մեծ դժ- գոհութիւն առաջ բերելով Գեր- մանիոյ մէջ, ընդհարում պիտի առաջ բերէր Բեթերսպուրկի և Պերլինի զահլիճներուն միջեւ:

ՀՈՇՏՈՒԹԻՒՆԸ

Ստացուած տեղեկութիւննե- րուն համեմատ ռուս և ճարոն լիազօրները վերջնապէս համա- ձայնած են երեք կէտերու մա- սին. ճարոնի հովանաւորութիւնը Բօլէայի վրայ ընդունուած է:

նոյնպէս Մանջուրիոյ պարպումը Ռուսներէն և Խարպինէն Բօլթ Արլուր երկաթուղիի գծին յանձնումը ոչ ճարոնի այլ Չինաս- տանի: Այդ երեք կէտերէն ա- մենածանրը եղած է երկաթու- ղիին խնդիրը:

Սախալինի, չէզոք նաւահան- գիտներու մէջ ապաստանած նա- ւերու յանձնման և պատերազմա- կան տուգանքի պահանջները բոլորովին մերժուած են ռուս- ներու կողմէն: Քօմուրան զարմա- ցելէ այդ մերժումին վրայ և կար ձեւ որ է վիթէ նախապէս հը- րահանք պիտի ուլէ Բեթերս- պուրկէն: Բայց սխալուեր է. վի- թէ ամեն պատասխանատու- թիւն վրան աւելելով մերժած է:

Մամուլի մէջ այդ երեք կէ- տերուն մասին համաձայնութեան գալէն վերջ լաւատեսութեան մը սկսած է երեւան գալ բա- նակցութիւններու յաջող ելքի մասին:

ՊԵՏՏՈՒԱԿԱՆ ՀՐԱՒԷՐ

Ախոյս 14 ին տեղի ունենալիք Թագապետութեան ընտրութեան առթիւ թէ քաղաքիս հայ գա- ղութիւն կողմանէ ընտրուելիք անդամիւ և թէ Աղգ. վարժարա- նայ Հոգաբարձութեան անդամ- ներն որոշելու համար, խորհուրդս կը հրաւիրէ արգոյ հայ հասարա- կութիւնը ներկայ գտնուիլ յա- աջիկայ կիւրակէ, 7 օգոստոս, ի ժամ 2 ու կէս: յ'Աղգ. վարժա- րան, համախորհուրդ որոշելու վերոյիշեալ պայտօններու համար ընտրելի ներկայացուելիք ազ- գայնոց անուններն:

Ի դիմաց Թագական խորհրդոյ Ատենադպիր Ատենապետ Ն. Գ. Քլետանեան Ս. Ազնաւորեան 5 Օգոստ. 1905 (Կնիք) Վ ա ո ն ա

Ա Ձ Դ

Տեղւոյս երկսեռ զպրոցի մէջ պաշտօնավարելու համար. կա- րող վարժուհիի մը պէտքը կայ, գոհացուցիչ ամսականով, ման- րամասնութեան համար զիմել տնիւնոյն Հոգաբարձութեան ատե- նապետին:

Ի դիմաց Հոգաբարձութեան Վ. Ատենադպիր Ատենապետ Վարդան Աղէքսանդր Գ. Արապեան Քիզիրեան (Կնիք)

23 Յուլիս 1905 Սիբիէն